Հավելված 1
Հաստատված է
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ վարչության
2025 թվականի հուլիսի 29-ի N 320-Լ որոշմամբ
Գործում է սկսած 2025 թվականի հուլիսի 31–ից

«50% զեղչ Mastercard Business Preferred քարտերի համար» արշավի իրականացման պայմաններ

1. Ընդհանուր դրույթներ.

1.1 **Արշավ՝** «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) կողմից 31.07.2025թ-ից 31.12.2025թ-ը ներառյալ իրականացվող արշավ:
1.2 **Քարտ՝** «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի կողմից սույն Արշավի ընթացքում թողարկված Mastercard Business Preferred տեսակի տարեկան վճարով սպասարկվող հիմնական քարտեր:
1.3 **Քարտապան՝** Արշավի շրջանակներում թողարկված Mastercard Business Preferred տեսակի Քարտի քարտատեր:
1.4 Արշավին մասնակցելու դեպքում Քարտապանն անվերապահորեն ընդունում է սույն Պայմանները և Դրույթները, որոնք համարվում են վերջնական և անվիճարկելի:

2. Արշավի պայմաններ.

2.1 Արշավի շրջանակում՝ 31.07.2025թ-ից 31.12.2025թ-ը ներառյալ, պատվիրված Mastercard Business Preferred տեսակի քարտերը (ներկայացված բոլոր արժույթներով) կսպասարկվեն հետևյալ տրամաբանությամբ՝

- Քարտի գործողության ողջ ժամկետի համար 50% զեղչված սպասարկման վճարով:
- Քարտի գործողության ժամկետը սահմանվում է 5 տարի:
- Քարտի տրամադրման և սպասարկման այլ պայմաններն անփոփոխ են՝ համաձայն տեղեկատվական ամփոփագրի:

2.2 Քարտերի գործողության ավարտից հետո կամ Քարտերի գործողության ընթացքում փոխարինման/վերաթողարկման դեպքում գործելու է Քարտատեսակի համար այդ պահին Բանկում գործող սակագները:
2.3 Բանկն իրավունք ունի սույն պայմանների և դրույթների մեջ ցանկացած պահի կատարել միակողմանի փոփոխություն և կիրառել փոփոխությունն անմիջապես՝ Բանկի պաշտոնական կայքում հրապարակելուց հետո: